39. ՀԵՔԻԱԹ ՔԻՇՄԻՇ-ԽԱԹՈՒՆԻ ԱԽՉԿԱՆ

Կէղնի, չէղնի մարդըմ ու կնիկըմ։

Էդ մարդուն մեկ տղա կէղնի։

Մարդն է, հըմալ կըխտիարնա, կընկնի վըր ճոկնին։

Կկանչե զուր տղեն, կասե.— Լաո, կտեսնաս, ես էկեր իմ հասի մեռնելու դուռ, իմ մեկ օտկ էդա դիի աշխարհն է, մեկ լե դրուկ է գերեզմընի դուռ, քըղիկ օսյաթ-ամանաթըմ կէնիմ, չմոռնաս։

Տղեն կասե.— Աբո, քու օսյաթն ի՞նչ է, ասե տեսնամ։

— Լաո, իմ օսյաթն էն է օր, երբ կարգվելու կէղնիս, օրական իրեք հեզ, իրեք փետ կզարկիս քու կնկան։

Պապ ու մամ օր կմեռնին, տղեն կմնա մինակ։ Կասե. «Ջանըմ, որն է ուր ետև հ՚ընցման ուր պապուն ու մամուն մեռի, ես հար ե՞ր սև կապիմ, նստիմ, պիտի էլնիմ կարգվիմ»։

Կէլնի զարկե զարկվի, կէրթա Քիշմիշ-խաթունի ախչիկ կուզե, կառնե կիգա։

Քիշմիշ-խաթունի ախչիկն է, շատ խոհեմ ու խելոք ախչիկըմ կէղնի։

Տղեն է, զէդ ախչիկ կառնե-չառնե, օրական իրեք հեղ, իրեք փետ կզարկե կնկան։

Տաս տրսնուհինգ օր էգ հըմալ կէրթա։ Հ՚ըմնօր լուսուն տղեն կէլնի մեկ փետ կզարկե կնկան, կթողե կէրթա։ Գիկա կեսօրվա հաց կուտե, մեկ լե փետ կզարկե կնկան ու կթողե կէրթա։ Փետրմ լե հ՚իրկուն կզարկե ու կպառկե քնի։ Քիշմիշ-խաթունի ախչիկ իսկի ձեն չհանե։ Բան օր կասե. «Ժը խերախոտեսա ընծիկ սուռըմ էղներ, մեկ լե թըզ զարկեր, բիլա նհախ տեխ օր կզարկե, էն է ցավ»։

Հ՝առջին դառց օր կթըմի ախչկան, ախչկա մամն է, կէլնի կէնե խոնջա-բոխչա, կիտա մշկու շալակն ու գիկա փեսի տուն, կասե՝ էրթամ զիմ ախչիկն ու փեսեն տեսնամ։

Մամն օր գիկա ախչկա տուն, կմտնի ներս, բարև կիտա, կնստի։ Կտեսնա օր ախչկա էրեսեն լու մը հ՝ընկնի, հազար կտոր կէղնի։

Կհարցու, կասե.— Ախչի, դու զքու նըյաթն հ՝որի՞ն իս էրի։ Կտեսնամ օր քու իրկա հալ ու վախտ աղեկ, քու իրիկ խորոտիկ, պակսութեն մը չունիս, զքու մատեն հ՝որի՞ն իս կախի։

Ախչիկն կասե.— Մամո, օղորդ է, ուրեն ու ուր զանկնութենեն խըսուր չկա։ Բըլե էն օրվընե օր զիս բերեր է ու չբերեր է, օրական իրեկ փետ կզարկե ընծիկ։ Բան չկա, թըղ զարկե, իմ իրիկն է։

Մամ բան մը չասե ուր ախչկան, եր կդառնա գիկա ուր տուն, կէլնի կէրթա ջատուքար պառվու մը մոտ։

Կասե.— Նանե, դու բանըմ չըս հասկնա՞։ Էդա իմ փեսեն էն օրվընե օր զիմ ախչիկ տարեր է, օրական իրեկ դան, իրեկ փետ կզարկե իմ ախչկան, էդոր սապապն ի՞նչ է։

Պառավն կասե.— Հ՝որի՞ չըմ հասկնա, կհասկնամ։ Կէրթաս քու ախչկան կասիս, օր ըստ հաղ զարկեց ուրեն, թըղ ասե՝ հ՝որի՞ կզարկիս ընծիկ, կտրիճ ես, գնա Սոյլամազ խանում բի, սորա զարկ ընծիկ։

Քիշմիշ խանում պառվու ասածի նման, կէլնի կէրթա մըտ ախչիկ։

Կասե.—Ըտ հաղ օր քու իրիկ էկավ, զարկեց քզիկ, կասիս՝ հ՝որի՞ ընծիկ կզարկիս, կտրիճ ես, գնա Սոյլամազ խանում բի, սորա զարկ ընծիկ։

Էդ տղեն է, օր գիկա տուն, կզարկե ախչկան, ախչիկ կասե.—Ընծիկ հ՝որի՞ կզարկիս, գնա Սոյլամազ խանում բի, սորա զարկ։

Տղեն կասե.— Ահտուվախտ էղնի, մադամ օր դու զէդա թանեն տվիր ընծիկ, չուրի զքու սրտի խորհուրդ չկատարիմ, քու խեչ չպառվիմ։ Դու էղնիս ընծիկ քուր, ես լե քզիկ ախպեր։

Կէլնի կնկաց բարեմնաց կէղնի, զուր ձին կթամքե ու կյամե, կոնկնի ճամբախ։

Կէրթա. շատ կէրթա, քիչ կէրթա, զէն լե աստված դինա։

Կէրթա էդ Սոյլամազ խանըմի քաղաք կէլնի դուրս։ Կքշե քաղքի մեջ, կհարցու զՍոյլամազ խանըմի տուն ու կէրթա Սոյլամազ խանըմի դուռ կիջնի ձիուց։ Կէնե օր էլնի վի, կբռնեն կասին.—Հ՝ու՞ր կէրթաս։

Տղեն կասե.— Կէրթամ Սոյլամազ խանըմի խեչ։

Էդ տեխ կանողներն կասին.— Դո՞ր կէրթաս, տնավեր, երեկ ձըր էրկրեն լե տղե մը էկավ, գնաց ուր մոտ, զգլուխ զարկեց, զքու գլուխ լե կզարկե։

Տղեն կասե.— Զարկե, չզարկե, վալլահի կէրթամ։

Էլավ դնմ քշեց Սոյլամազ խանումի դիվան, բարև տվեց, դրին քուռսի, նստավ։ Խանում բարև չառավ։

Նիհայաթ ինչ օր կէնե, չկրռնա Սոյլամազ խանումի բերան բանա։

Օր չկրռնա խոսացու, Սոյլամազ խանում կկանչե զուր ջալաղչիք, կասե.— Տարեք, զէդա տղի գլուխ զարկեք։

Ջալաղչիք կէլնին, առնեն զտղեն ու կէրթան։

Օր կէրթան, կտեսնան օր էնդիեն բաղբրկան բաշի մը գիկա։

Բաղբրկան բաշին օր գիկա, կհառնի շալաղչոց մոտ, կտեսնա օր բերած են տղի մը գլուխ, կզարկեն։

Կվերու կասե.— Ախպըրտանք, զէդոր գլուխ մը զարկեք, խեղճ է, իմ հ'առջևու մարդ մեռեր է, էկեք բոլամա փարա կիտամ ձղիկ, զէդ տղեն տվեք ընծիկ, գացեք ասեք՝ սպանեցինք։

Ջալաղչիք լե ըռամով կէղնեն։ Կբերեն զէդ տղեն, կիտան բազրկընին, ուրանց կառնեն բոլ փարա, կդառնան կէրթան, կասեն՝ զարկեցինք։

Էդի թըղ էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք Քիշմիշ-խանումի ախչկա վրեն*։

Քիշմիշ-խանումի ախչիկն է, տեսավ օր իրիկ հանգցավ, չէկավ, թողեց զգետին, տփեց վըր գլխուն։

— Հե՛յ վախ, էդ ի՞նչ էր էրի, ես ուրիշին անկաճ էրի, զիմ իրիկ տվի կորցնել, ես պիտի էլնիմ, էրթամ իմ էրկա ետևեն։

Կէլնի զուր հալվըներ կփոխե, կառնե խաթըմ մարդանակ աղեկ հալավ հագնի, զուր ծամեր կծալե, դնե քոլսի տակ, զփետ կառնե ձեռք ու կընկնի ճամբախ, իրկա ետևեն։

Շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչն աստված գինա։

Գնաց սարի մը տախիլ էղավ։ Քիչ մը հեռեվանց իշքեց, տեսավ օր, էդ սարի գլուխ էրկու մարդ կա. մեկ սիլով, մեկ լե ձեռք դարդակ է։

Էլ չգնաց էդոնց մոտ։ Կանավ ու թամաշա էրեց, ասեց՝ տեսնամ ի՞նչ կէնին, իմ դին գիկան, օր էկան, փախնիմ, ազատիմ։

Կիշքե, օր հավքըմ էկավ էդ էրկու մարդու խեչ, դրեց վըր քարին ու նստավ։ Օր նստավ, սիլայով մարդ քաշեց զուր թֆընկի թաթեկ, զհավքն բերեց ցած։

Հավքն օր պատավ, ձեռք դարդակ մարդ վազեց վըր էդ հավքին ու քաշեց զգլուխ ձեռքով փրցուց։

Օր փրցուց, կնիկ չէ՞ տեսավ, ասեց՝ էդա մարդիկ արընտեր մարդ ին, ես էդոնց խեչ պիտի չէրթամ։ Ծռեց զուր ճամբախ ու հ'ընկավ գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, շատ ու քիչն աստված գինա։ Էկավ սարու մը նորեն տախիլ էղավ։ Էլավ էդտեխ, տեսավ օր հ'էրըմ կա էդտեխ։

---

* Էդ տղի կնկան (Ն. Բ.)։

Դեմ քշեց հ՝էրի մեջ։ Տեսավ օր իրեկ մարդ հանդին հ՝ուդա։ Մեկն էրեց է, մեկն՝ թարզի, մեկ լե նաճարըմ, առեր է կտորըմ տախտակ ուր հ՝առջև ու կոբնտե։ Ըռընտա զարկեց խըլըսավ, շինեց փետե կնիկ մարդըմ ու կանկըցուց։

Թարզին օր էլավ, տեսավ զէդ ուստի հունար, էլավ ձեռկըմ շոր կտրեց, բերեց վըր էդ փետին հադուց, կանկըցուց։

Էրեց լե օր էլով, տեսավ զէդ ուստի ու թարզու էրածները, ասաց.— Յավաշ բանըմ լե ես էնեմ։

Առավ զուր գիրկ, կանավ վըր փետի գլխուն ու պըթպըթաց։ Դառցավ իսան։

Զէդ օր տեսավ կնիկ, էլավ լուսուն հեծավ զուր ձին ու զէդոնք թոզեց հ՝ոդի, հ՝ընկավ ճամբախ։

Շատ գնաց, թե քիչ գնաց, շատ ու քիչն աստված գինա։

Գնաց Սոյլամազ Խանըմի քաղաքըն էլավ դուրս։

Հարցուց ասեց.— Սոյլամազ Խանումի տուն դո՞ր է։

Ծուցուցին ասին.— Էնա է։

Էդտեխ էղոզներ հարցուցին, ասին.— Դո՞ր կէրթաս, հ՝որի՞ կհարցուս Սոյլամազ Խանըմի տուն։

Ասեց.— Կէրթամ Սոյլամազ Խանըմի մոտ։

Ասին.— Տնավեր, գո՞ր կէրթաս, երեկ ձըր էրկրեն մարդըմ էկավ, գնաց ուր մոտ, բռնեց, ուր զգլուխ զարկեր։ Բազըրկանըմ հ՝ռաստ էկեր է, ազատեր է ջալադչոց ձեռքեն, առեր է, գացի ուրեն։

Կնիկն հասկցավ, օր ուր իրիկն է էղի, ասեց.— Փառք աստծու, սաղ ջուհարն առանք, չէ էդա հեղ լե զիմ էրկա սաղ ջուհարն առա։ Ինչ կէղնի՝ թըղ էղնի։

Կնիկն կասե.— Ես կէրթամ, ինչ կէնե, թըղ էնե։

Էլավ, դեմ քշեց գնաց Սոյլամազ Խանըմի մոտ։

Կէրթա կմտնի ներս, բարև կիտա, Սոյլամազ Խանըմ զբարև չառնե։

Տղեն կասե ինքն ուրեն՝ «Աստծու բարին, բարով էկար» ու կնստի։

Օր կնստի, կվերցու կասե.— Սոյլամազ Խանում, կքիպարնաս, թե ես էկեր իմ քղիկ համար, ես էկեր իմ, քինե բան կհարցում, կէրթամ։ Ասեցին Սոյլամազ Խանում խելոկ է, էնդոր համար իմ զարկի էկի քու մոտ։ Իմ կնկա օտկ չըմ իտա զքու գլխուն ու զքու յոթ հոր գլուխ։

Սոյլամազ Խանում ձեն չհանե։

Կվերու տղեն կասե.— Սոյլամազ Խանում, ես ճամբով գիկենք, էկա սարու մը գլուխ էլա, տեսա օր էրկու մարդ կանուկ ին էդտեխ։ Մեկն սիլով էր, մեկ լե ձեռկ դարտակ էր։ Տեսա օր հավքըմ էկավ էդոնց խեչ, դրեց քարու մը վրեն։ Սիլով մարդ զարկեց զէդ հավք, էձգեց, դարտակ

ձեռք մարդ վազեց վրը էդ հավքին, ձեռկով զգլուխ փրցուց ու առավ գնաց։ Էդ հավք վի՞ր կհասներ։

Սոյլամազ խանում կասե—էն օր սիլով զարկեր է, էնդոր կհասնի, դարտակ ձեռք մարդուն հախ չկեր։

Սոյլամազ խանում խոսաց, տղեն ասեց.—Էդա մեկ։

Մեկ լե կվերու։ տղեն կասե.— Սոյլամազ խանում, մախուլութենդ բռներ է, չըս խոսա, ես քի համար չըմ էկեր ի, հասկցի, իմ կնկա օտկ չըմ փոխի քու գլխու հետ, ես էկեր եմ. բան կհարցում քինե։ Էկա ճամբով, էկա սարու մը հ՝ռաստ, տեսա օր էդտեխ հ՝էրըմ կեր, մտա հ՝ինկ, տեսա օր իրեկ մարդ նստուկ ին, մեկն նաճաբ էր, մեկն թարզի էր, մեկն էլ էրեց էր։ Էդ նաճաբ կտընդրներ ու ուրագն առեր էր ձեռք, փետրմ կտաշեր։ Մեկ լե տեսնամ օլուղ-ուշաղրմ շինեց, կանկրցուց։ Էդ օր շինեց կանկրցուց, թարզին ասեց. «Յուվաշ, բանըմ լե ես էնեմ»։ Էլավ ձեռքըմ հալավ կտրեց, կարեց, բերեց հագուց վրը էդ փետե մարդուն, կանկրցուց։ Էրեցն ասեց. «Ես խոմ հարա՞մն իմ կերի, նաճարն ու թարզին զուրանց էրած էրին, կանի բանըմ լե ես էնիմ»։ Էլավ առավ զուր գիրքն ու կանավ վրը էդ փետե մարդու գլխուն, պըթպըթաց, հոգի բերեց հ՝ինկ։ Հըմկա էդ կնիկ էդ իրեկ մարգուց վի՞ր կհասնի։

Սոյլամազ խանում կվերցու ասե.— Էդ կնիկ իրիցու ջանին կհասնի ես լե քու ջանին։

Օր կասե՝ «Ես լե կհասնիմ քու ջանին», կէլնի զուր ունեցածն ու չունեցած կբառնա, գիկա։

Կնիկն օր տղեկնակ հալով էր հագի, ռաստ գիկա էն բազըրկնին, օր զուր իրիկ առեր էր, տարի։ Կիտա զբազըրկնի փարեն, կբառնա զուր բեռներն ու կառնե զիրիկ ուր հետ ու կընկնի ճամբախ գիկա։

Եբ գիկա ճամբու կես, բազրրկնի հ՝առջևու մարդ, օր էդ կնկա իրիկրն է, գինա օր ուր էրկիր կէրթան, կասե.— Վալլահի, իմ շորեր հին ին, ես չըմ հ՝իգա։

Կնիկ կճանչնա զէդի, էդի չճանչընա զկնիկ։

Տղեն (կնիկ) գիկա կասե.—Օր Սոյլամազ խանումն ու ձեռկըմ շոր իտամ քզիկ, ի՞նչ կիտաս։

Տղեն կասե.—Ինչ իտամ, ես ըռութի մը մեկ իմ հըմկա։

Կնիկ կասե.— Բան չըմ հ՝ուզի քենե, կուզիմ օր թողիս իմ մատնըկի ակով տաղմե մը զարկիմ վրը քու հ՝օ. . ն։

Տղեն կասե.— Հա, թըղ էղնի։

Էլավ էդ դաշտի մեշ էդ տղեն ժողվեց շոր թիթրին, առավ էկավ։ Կրակ դրեց, կնիկ բերեց կարմրցուց զուր մատնեկ, տաղմե մը զարկեց վրը էդոր հ՝օ. . ն, տվեց Սոյլամազ խանում ու ձեռկըմ հալավ ուրեն թողեց, հ՝ընցավ հ՝առեջ էկավ։

Էկավ, հասավ տուն։ Թեփրրփոխվավ, հագավ զուր կնկնակ հալավն, ստախտն ավլեց, հ՝իստկեց ու էլավ փանջարեն նստավ։

Որ էկավ նստավ, նաֆասըմ առավ չառավ, մեկ լե տեսավ, որ ուր բազրրկան էկավ, զբեռներ թափեց։

Կնիկ էլավ հ՝առեջ, զբեռներ հ՝իջուց, Սոյլամազ խանումն ու զիրրկ բերեց ներս, բազրրկնին լե ձիաբեռրմ օսկի տվեց, ճամբցուց ուր տուն։

Սոյլամազ խանումն է, մեկ-էրկու օր մնաց, զէրկու օտկ գրեց մեկ սոլի մեջ, ասեց.— Հա հ՝իգամ, հա էրթամ, ես էդա քոխտրկներու մեջ չըմ մնա, ընծիկ քոշկ ու սարե մը կշինիս՝ շինե, չըս շինի՝ կթողիմ կէրթամ, քու մոտ չըմ կանի։

Տղեն շանդարդի էղավ, էլավ քոշկ ու սարե մը շինեց, զՍոյլամազ խանում դրեց հ՝ինկ։

Որ քոշկ ու սարեն շինեցին, խըլըսան, միտկ ընկավ տղի փետ, որ զկնիկ կտրփեր։

Ասեց.— Կնիկ, իմ փետ հ՝ու՞ր է։

Կնիկն ասեց.— Քու փետ հանդե, խոմ զփետ լե չկերանք։

Էլավ, գնաց, բերեց տվեց էրկան։

Որ բերեց տվեց, տղեն էլավ, որ մեկ լե տրփեր զկնիկ, կնիկն ասեց.—Հ՝որի՞ն կզարկիս ընծիկ, իշքե վըր քու հ՝օ.. տաղմեն, սորա զարկ ընծիկ։

Մարդն պաղավ մնաց։ «Ջանըմ,— ասեց,— էդի ի՞նչ գինա իմ հ՝օ.. վրեն տաղ կա, չկա»։

Կհարցու կասե.— Ի՞նչ տաղ է։

Կնիկն կասե.— Հըմլա շուտ կմոռնա՞ս, միտկդ չէ, որ ֆլան դաշտի մեջ իմ մատնեկ կարմրցուցի, զարկի վըր քու հ՝օ.. ն, Սոյլամազ խանումըն ու ձեռկըմ հալավ տվի քզիկ, առար էկար։

Մարդն կտեսնա, որ չկառնա ինքյար էնե, հմա կթողե զփետն ու կհասնի կնկա ճակատ կբռնե, պագնե։

Կասե.— Կնիկ, ես էրեր իմ, դու մ՝էնի։ Չէղնի ասիս, էգ ձեն հ՝ընկնի դուրս, խավլ ու խըրար էղնի որ, հորես բաց քզիկ վարդ չթալիմ. դու իմ մեծ էղնիս, ես քու պզտիկ։

Կնիկ կասե.— Չէ, ես քոռցե՞ր իմ զքզիկ ըռազիլ էնեմ մըշ աշխըրկին, քու նամուս լե իմ նամուսն է։

Կմնան հինգ-տաս տարի, Սոյլամազ խանում կհիվընդնա, կընկնի հոգու հետ։ Որ հոգու հետ կընկնի, կկանչե զէդ տղեն, օսյաթ ու ամանաթ կէնե, թե. «Իմ սրտի օսյաթն ու ամանաթն էն է քզիկ, որ դու աշխըրկի մեջ վախ չունենաս, ինչ լե որ կդնես քու սրտի մեջ, կատարես, թաղսիր չէնիս, մեկ լե զիս հըմալ տեխըմ հորիս, որ տարին տըսներկու ամիս

վըր ընծիկ արև չառնե, իմ հարստութեն հ՚ըմեն թըղ էղնի քզիկ, զէդ բան մինակ իճրա էնիս» ու կընկնի կմեռնի։

Օր կընկնի մեռնի, տղեն կէլնի խորոտիկ բաղ ու բաղչե մը կդնե, կտանե Սոյլամաղ Խանում հ՚ոնի կպահե։

Օր կպահե կխըլըսի, կդառնա գիկա ուր տուն։ Էդ օրեր էդ տղի հողբոր տղեն կկարգին, տղեն կէլնի էրթա հարսնեկ։

Հարսնած կհասնի հարիր ձիավորի։ Կէլնին կէրթան, օր առնեն զհարս, իգան։

Յոթն օր էդտեխ կուտեն, կխմեն, սորա կհեծնին կէրթան։

Կհեծնին կէրթան։ Շատ կէրթան, քիչ կէրթան, շատ ու քիչըն աստված գինա, կէրթան քրդու մը գեղի մոտ, չայիր-չիման տեխըմ կիջնեն ձիանուց։ Քիչըմ ձիանք կարծեն, հարսնած կէլնի օր էրթա, տղեն սարխոշ կէղնի, չրկըռնա զուր ձին հեծնի, կմնա էդտեխ։

Հար հ՚իրկուն կմնա էդտեխ, ըռազին օր կթափի գլխուց, կիշքե օր հարսնած չկա, կասե. «Ձիս լե մորթեն, էդա գիշեր պիտի էրթամ, էդա քրդու գեղ մնամ»։

Կէլնի զուր ձին կքաշե, գիկա քրդու գեղ։ Գեղն օր կմտնե, կտեսնա օր կյաճկե մը կանուկ է դուռ։

Կասե.— Բարև քզիկ, քուրո։

Կյաճկեն կասե.— Աստծու բարին, ախբեր։

Տղեն կասե.— Քուրո, մսաֆըր չը՞ս պահի։

Կյաճկեն կասե.— Բարի մսաֆըրն վըր իմ գլխուն ու աչից հ՚իգա, հ՚իշի, զքու ձին քաշե ներս։

Տղեն կիշնի ձիուց, զուր ձին քաշե ներս։

Կյաճկեն կբերե տեխ կթալե, նստցու, չայ ու խահվեն կդնե կրակ, ձիուն դարման կիտա ու գիկա նստի։

Հ՚իրկուն օր կէղնի, տղեն կբռնե զէդ կյաճկի յախեն՝ հա հ՚իգամ, հա էրթամ, դիկաս իմ հետ կիտաս ու կառնես։

Կյաճկեն կասե.— Տնաշեն, դու հ՚առշի հեզ օր էկար հ՚իշար, ընծիկ ասիր՝ բարև քի, քուրո, ես լե քզիկ ասի՝ աստծու բարին, ախբեր։ Քուրոջ ու ախբոր մեջ իմա՞լ հըմլա բան կէղնի։

Տղեն ասեց.— Չէ, քի չէղնի։ Էն դախ բանըմ էր ասի, հ՚ընցավ գնաց։ Իմ սիրտ օր հ՚ընկեր է քի, չարա չկա, զէդ բան պիտի էնիմ քու հետ։

Կյաճկի ճար կկտրե, կասե.— Օր հըմալ է, ելի գնա, էդա տեխ հ՚առու մը կա, լողկցի էկո, զէդ բան էնենք։

Տղեն կէլնի, շապկանց ու թումբնով կվազե հ՚առուն օր լողկնա։

Հար կլողկնա, դառնա հ՚իգա, կյաճկեն մուխքյամըմ զդուռ ետեվանց կփակե ու գիկա պառկի քնի։

Տղեն է, կլողկնա, զիկս վըր ղռան, կպոռա, չպոռա, կյաճկեն զդուռ չբանա։

Կյաճկեն լե ախբեր մը կեր, հ՝ուրնե բաժան էր։ Էրկու օր հ՝առաջ, իմալ կէղնի, ախբորն կասե. «Ախբըրուկ, դինա՞ս, քու կնիկ սիրողութեն կէնե, հընդե էդ սիրողներ միակ էրեր ին, զքզիկ կորցուն»։

Դառնանք վըր տղին։

Տղի ճար կկտրի, կտեսնա օր ախչիկ զդուռ չբանա ու ինկ մնաց դուրս, կասե. «Կանի, էդոնց բուխերեկներու երդկները լեն ին, էլնիմ էրթամ, իշնիմ էդոնց երդկեն, զդուռ բանամ»։

Կէլնի օր էդ կյաճկի բուխերկի երդկեն հ՝իշնի, կմոռնա կէրթա կյաճկի ախբոր բուխերկի երդկեն կիշնի։

Օր կիշնի, կտեսնա էդ մարդու կնիկ նստեր է, էրկա գլուխ դրեր է վըր չոքին ու կքնի։ Ինկ լե բուխերկի մեջ կվըրվըրցու։—Յա՜,—կասե,— ես հ՝ու՞ր էր էկա հ՝իշա, էդ ի՞նչ էր էրի, էդա լամուկն օր հ՝իմցավ, խերն հաղ զիս կսպանե։

Մեկ լե տեսավ օր, էդ թավլի էրդկեն քանի մը մարդ շըրիգըմ հ՝իջուցին ցած։ Դու մ՝ասի, էդ մարդիկ էդ կընկա դոսթերն են էղի։

Շըրիդն օր հ՝իջուցին ցած, կնիկ վերցուց զէրկա գլուխ դրեց գետին, էլավ զշըրիդն առավ, էկավ, էրեց օղ, թալեց էրկա վիզ, քաշեց տարավ էրդկի դեմ, քաշին օր հանեն դուրս։

Տղեն ասեց. «Իմ ազատելն օր կա, հըմկա է, թը չէ՝ էդա էրդկի վրավու էղողները հ՝իշան, ընծիկ հ՝ուհու ազատել չկա. էրթամ, բալքիմ զէդ տղեն ազատեմ, էն լե զիս ազատե»։

Կէլնի բուխերկի մեջեն, կնիկ կտեսնա օր շապկանց ու թումբնով մարդըմ էլավ բուխերկեն, կհասնի քաշե խանջալ էդ մարդու կշտեն, կթալե շըրիդ ու կկտրե։ Լամուկ կփրթնի, հ՝ընկնի գետին։

Օր կհ՝ընկնի գետին, կհեշրնա, կասե.—Դու ի՞նչ մարդ իս, օր զիս սպանեցիր։

Տղեն կվերցու կասե.— Խելք ժողվե գլխուդ, հըմլա անհամ-անհամ մը խոսա, ես օր չէդնենք, դու հըմկա գացեր էր հասի հազար տարվա մեռելին, խելք թըղ հ՝իգա քու գլուխ, սորա նախլ կէնեմ։

Եր խելք էկավ լամկու գլուխ հաժե խո էղավ, էլավ նստավ։

Կնիկ զկիտն առաջ էրեց, ասեց.— Մարդ, էդի կուզեր զքզիկ սպաներ, ես վազեցի թալեցի զքու խանջալ, կտրի զչվան, հ՝ընկար գետին։

Մարդն է, կէլնի կնստի կասե.— Դը պատմե տեսնամ, դու ի՞նչ մարդ իս, օր էդա գիշերով, շապկանց ու թունրնով էկեր իս իմ տան մեջ։

Տղեն կվերցու կասե.— Ես ճամբորդ մարդ իմ, էկա կընցնենք, մութ տվեց վրես, ասի՝ էրթամ էդա գեղ հ՝իշնամ։ Էկա տեսա օր կյաճկե մ՝ը կանուկ է դուռ։ Բարև տվի ուրեն, ասի՝ քուր, ինք առավ զրարև, ընծիկ

ասեց՝ ախբեր։ Ասի՝ քուր, էդա տեխ մըսաֆրի տեխ կա՞։ Ախչիկն ասեց՝ բարի մսաֆըր իմ գլխուն ու իմ աչկին հ՚իգա։ Քաշեց զձին, մտանք ներս։ Բևրեց չայ, խահվա իկրամ էրեց ու դարման տվեց ձիուն, նստանք։ Հ՚իրկուն իմալ օր էղավ քնելու վախտ, սատանեն մտավ իմ սիրտ, ասի կյաճկին՝ ախչի, արի զէդա բան իմ հետ էրե։ Կյաճկեն ասեց՝ տնաշեն, դու ընծիկ ասիր քուր, ես քզիկ ախբեր, ախբոր ու քուրոջ մեջ էդ բան իմա՞լ կէղնի։ Ինչ ասեց, զիս չկըռցավ համոզել, ջանդարդի էղավ։ Ասեց՝ էլի գնա, մըր գեղի տակ հ՚առու մը կա, լողկցի, էկո, ինչ դինաս՝ էրե։ Ես օր գացի լողկցա, էկա, հնչի էկա, տեսա օր ախչիկ զիս խաբեր է, փակեր է զդուռ ու պառկի քնի։ Պոռացի, չպոռացի զդուռ չբացեց։ Ճարս կտրավ, ասի՝ ելնեմ էդոր բուխերկի հ՚երդկեն հ՚իջնամ։ Ես էլա օր հ՚իջնենկ, զբուխերեկ մոլրա, էկա, քու բուխերկի հ՚երդկեն հ՚իջա ցած։ Հ՚իջա տեսա օր քու կնիկ հեջար նստուկ է, դու լե դրեր ես զքու գլուխ վըր քու կնկա չոքին ու պառկի, քնի։ Բուխերկի մեջ ղուռի պես կդողամ ու ես հիս-հիս կասեմ՝ հըմկա էդա մարդ օր հ՚իմցավ, զիս տեսավ հ՚ոդա, խերն հաղ, զգլուխս կկտրե։ Ես էդ մթալի մեջն ենք, մեկ լե տեսա շըրիդըմ ձըր ախոռի էրդկեն հ՚իջավ։ Քու կնիկ տեսավ օր շըրիդն իջավ, դրեց զքու գլուխ գետին, էլավ գնաց շըրիդ էրեց խափ, բերեց թալեց քու բոկ ու էնդոնք սազեցին, օր քաշեն, հանեն վերին դին։ Էնդոնք օր էդ էր կքաշեն հանեն, ես ասի՝ էդա մարդիկ կան ու չկան, էդա կնկա դոսթերն ին, օր հ՚իջան ներս ու զիս տեսան՝ թուքնի պես կբրդեն։ Էնդոնք իրեք ու չորս ին, ես մեկ իմ։ Մեկ լե կէղնի, էրթամ զէդոր էրիկ ազատեմ էդոնց ձեռքեն, էն լե հ՚ելնի զիս ազատե։ Վազեցի բուխերկի մեջեն, էկա, քաշի քու կշտեն զխանջալ, թալի շըրիդ կտրի։ Շըրիդ օր կտրավ, դու փրթար, հ՚ընկար ցած։ Զըս ավդընա՞ լե, քու խանջալ, իմ հալվըներ ու ձին էլ հանդե էդ կյաճկի տուն, կուզիս՝ քելե էրթանք ցուցում։

Էդ հըմալ օր պատմեց, քրդու տղեն վերցուց ասեց.— Էդ կյաճկեն իմ քուրն է, հըմ քելե էրթանք, տեսնանք։

Հ՚ելան առան զիրար ու էկան։

Լամուկն քուրոջ պոռաց.— Սըլվի, Սըլվի, զդուռ բաց։

Կյաճկեն օր լսեց զախբոր ձեն, ասեց.—Ախբեր, էդի դու՞ իս։

Վազեց էկավ զդուռ բացեց։

Օր զդուռ բացեց, ախբերն ու տղեն հ՚իգրաց մտան ներս։ Ներս մըտնելու պես, ախբերն վերուց քուրոջնե հարցուց.—Ախչի, էդա մարդ քու տու՞ն է մսաֆըր էղի։

Ախչիկն ասեց.— Հա։

Օր ասեց հա, ախբերն ասեց.— Օր քու մսաֆըրն էր, հ՚որի՞ն ես էրի դուրս։

Իմալ օր տղեն թարիֆ էրեր է լամկուն, քուր լե հրմալ ախբոր պատ-մեց զուր ու զուր մսաֆըրի նա օլդուղեն։

Նոր ախբեր լե զուր գլխու գալածն պատմեց քուրոջ։

Քուրն ասեց.— Չէ՞ ես հ՝ընցած օր ասի քզիկ՝ քու կնիկ դոսթի տեր է, կօլբրտեն քու ետև, օր զքզիկ կորցուն։ Կէրևա աստծուց է էղի, էդա մարդ էկավ հ՝էսօր, էղավ մզիկ մսաֆըր, թը չէ՝ զքզիկ խերն հաղ կսպանեն։

Նոր կբերեն զտղեն կպահեն հ՝ոդի, հար հարսնած կդառնա կիգա, տղեն թարիֆ կէնե, թե ինկ հարսնած է էկի, էկեր են հ իջի ուրանց գե-ղի չայիբտանք, հ՝ընկերտանք հեծեր են գացի, ինք սարխոշ է էղի, չկրոցեր է հեծնի, էրթա։

Տղեն իրեկ-չորս օր կմնա հ՝ոդի։ Լամուկն ու քուր լալական, ծառա-կան կէղնեն տղի հ՝առջև։ Հ՝ըմեն սահաթուն կէլնեն ու կմտնեն՝ թե եբ կիգա էդոնց հարսնած հ՝ընցնի, օր մենք լե զմբր մարթութեն էնենք։

Հեղբմ լե կիշքեն, օր հարսնած էկավ։ Կէրթան հարսնեց հ՝առեջ, ինչքան մախլուխ կէղնի, կբերեն զբմեն կիջուն ուրանց տուն քուրն ու ախբեր։ Իրեկ օր կպահեն, կկերցուն, կխմցուն, հարս կճագեն կդնեն վբր ճամբու, կէրթա։ Երբ զհարս ճամբու կդնեն, կէրթա, ըստ հաղ կբերեն բեռ ու բարձրմ լե էդ տղեն կկապեն։ Զի մը կիտան ու քուրն ու ախբեր կբերեն դնեն ճամբու ու կդառնան կէրթան։

Օր կբերեն դնեն ճամբու, կասեն.— Քանի սաղ իս, գիկաս ու կէր-թաս, իմ տուն էլ իմ տուն չէ, քումն է։ Էկո, ավրե, թափե, տար, կուզիս՝ բռնե զիմ էրեխեսներու ձեռք, տար մորթե, քու հ՝առջև մարդ կանող չկա, քանի օր դու զիմ կյանք ազատեցիր,— կասե լամուկն։

Լամուկն ու քուր լե օր զտղեն կդնեն ճամբու, դառնան գիկան։ Գի-կան ախպըրկա վիղ կապ կթալեն, խեղդին։ Նոր կբերե ուրեն կնիկ ու կէղնի տան ու տեխի տեր։

Տղեն գիկա, կհասնի հարսնածին, զհարս կբերեն կիջուն, կպսակեն, փրթնեն։ Կթողե գիկա ուր տուն, ըռհաթ կնստի։

Էրկնքեն հ՝իջավ իրեկ խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ անկաճ էնողին, մեկ լե՝ զահմաթ քաշողին։